ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

28 հոկտեմբերի, 2014թ. ք. Երևան

«ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում Սյունիքի մարզի ՔՀԿ-ների հետ» թեմայով

2014 թվականի հոկտեմբերի 29-ին Կապան քաղաքում («Դարիստ» հյուրանոց) «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպում է հակակոռուպցիոն միջոցառում «ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում Սյունիքի մարզի ՔՀԿ-ների հետ» թեմայով:

Միջոցառմանը հրավիրված են ներկայացուցիչներ ՀՀ Արդարադատության նախարարությունից և այլ պետական մարմիններից, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից, Սյունիքի մարզի քաղաքացիական հասարակությունից և ԶԼՄ-ներից, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայից և «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փորձագետները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են գալու ՀԵԻԱ-ի գործադիր տնօրեն, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի համակարգող/դրամաշնորհների պատասխանատու Արտակ Սարիբեկյանը, ծրագրի ռեգիոնալ համակարգող Անի Ասատրյանը: Ողջույնի խոսքերին հաջորդելու է ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի ներկայացումը և քննարկումներ նախագծի, Հայաստանում Հակակոռուպցիոն անկախ հանձնաժողովի ստեղծման և ապօրինի հարստացումը քրեականացնելու հարցերի վերաբերյալ: Մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվելու մասնակցել քննարկումներին և հանդես գալ առաջարկություններով:

Համանման հանդիպումներ տեղի են ունեցել նաև Երևանում, Գավառում, Վանաձորում, Արարատում և Գյումրիում:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Գարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Գատարող՝ Նարինե Գարապետյան,Էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճե: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: